

ՀԵԿՏՈՐԻ ԵՒ ԱՔԻԼԼԷՍԻ ԿՈՒԻԻԸ

(Թարգմանութիւն Հովերոսից)

(Նուիրում եմ պ. Սեդրաբ Մոնղիցեացիին)

Իսկ Աքիլլէան հասաւ նրան
 Կերպարանքով Արէսի պէս՝ սաղուարտախրոխտ մաքառողի.
 Պելիոնեան անեղ նիզակն իւր աջ ուսին խաղացնելով.
 Նրա վրայ պղինձը վառ շող էր տալիս փայլակի պէս,
 5 Կամ ինչպէս հուր բոցավառուած և կամ արև ճաճանչափայլ
 Դողաց Հեկտորն, երբ այդ տեսաւ, նա սիրտ չարաւ մնալ
 այնտեղ,

Այլ իւր յետև թողեց դռներն ու սարսափած փախաւ հետուն.
 Ու յետևից թաւ Պելեանն՝ յուսալով իւր վարժ ուղբերին:
 Ինչպէս օդում ճախրողները արագասուր ցինը սարում
 10 Թեթևաթռիչ վազ է տալիս դէպի վախկոտ մի աղանի՝
 Շուտ-շուտ փախչող այս ու այն կողմ, ու ճշալով մօտ է գալիս
 Եւ յարձակուում յաճախ վերան՝ շուտ բռնելուց խրախուսուած,
 Աքիլլն այդպէս առաջ թաւ նրա յետից. սա պարսպի
 Երկարութեամբ վազ էր տալիս և իւր ծնկներն արագ շարժում:

15 Դիտանոցի և զովաշունչ մոլաթզենու մօտով նոքա
 Միշտ պարսպից դէպի այն կողմ վազում էին արահետով.
 Եկան, հասան գեղեցկարուղիս աղբիւրներին, ուր պղպջալով
 Սկամանդրոսի երկու սիրուն առուններն են հոսում յորձուտ.
 Բղիտում է մին ջերմախառն, և նրանից շոգին ելնում,

20 Շուրջն է պատում, ինչպէս ծուխը բոցավառուած հրոյ միջից
 Միւսն հոսում ամառը պաղ՝ ինչպէս կարկուտ գարնանային
 Կամ ձմրան ձիւն, կամ թանձրամած և հաստաչերտ սառցի կտոր
 Նրանց մօտիկ կային այնտեղ լայն, ընդարձակ աւազաններ,
 Գեղատեսիլ ու վրմատաչ, ուր որ իրենց տօնազգեստներ

25 Կռանում էին արովան կանայք և դուստրներ չքնաղագեղ,
 Խաղաղութիւնն էր երբ տիրում և աքայեանք չէին եկել:
 Վազում էին դէպի այնտեղ՝ փախուստ տուողն ու հալածող.
 Առաջից մի քաջ էր վազում և քաջագոյնն էր հալածում.
 Կենդանի կամ ցլի կաշի չէին դրել կէտ նոպտակ,

30 Ինչպիսի մրցանակներ դնում են վաղող մարդկանց համար,
 Այլ ձրավարժ այն Հեկտորի կեանքի համար էր արշաւանք:
 Ինչպէս փութով դուպարայաղթ, սալամամբակ երբ վարներ
 Նշանի շուրջ վազ են տալիս, և կայ դրուած մեծ մրցանակ՝

- Եռօտանի կամ սիրուն կին՝ կուում մեռած քաջին պատիւ,
 35 Այնպէս ահա Պրիամոսի քաղաքի շուրջ սրաթև ոտքով
 Բուրեղին երեք անգամ. և աստուածներն հանդիսատես:
 Սկսեց նոցա աստուածների և մարդկանց հայրն ասել այսպէս.
 «Ո՛վ աստուածներ, սիրելի մարդն հալածական պարսպի
 շուրջն
 Իմ աչքերով տեսնում եմ ես, մորմոքում է սիրտս ու հոգիս
 40 Հեկտորի վրայ, որ ճենճերեց արջառների շատ ազգրեր ինձ
 Բազմահովիտ Իդա լերան սէգ գագաթին, այլ անգամներ
 Բարձր և ամուր քաղաքի մէջ. քաղաքամարտ Ա.քիլլը արդ
 Պրիամոսի ոստանի շուրջ սրբնթաց ոտքով նեղում է նրան:
 Բայց ճն, աստուածք, ձեր արտերում դուք մի վճիռ արդ
 խորհեցէք,
 45 Թէ արդեօք նա պիտ խուսափի մահուան ձեռքից, թէ Պե-
 լիսեան
 Ա.քիլլէսին թողնենք, որ այն քաջին ընկճէ իւր զօրութեամբ»:
 Նրան Զեսի խաժակ դուստր Աթենասը պատասխանեց.
 «Ամպաթնիս հայր, կայծակնայու, այդ Բնչ խօսքեր ասացիր
 դու.
 Մահկանացու ծնուած մարդուն՝ վաղուց մահուան ճակա-
 տագրած,
 50 Կուզես մահուան աղէտալից զօրութիւնից այժմ փրկել.
 Արա այդպէս, միւս բոլոր աստուածներս չենք համաձայն»:
 Ապա նրան ամպրոպային Զեսը այսպէս պատասխանեց.
 «Սիրտ առ, կառափնածին, սիրուն դստրիկ, ոչինչ սրտանց
 Չեմ ասում ես և դէպի քեզ քաղցր լինել եմ ցանկանում.
 55 Արա այնպէս, ինչպէս որ այդ հաճոյ է քեզ. մի լար այդպէս»:
 Զեսն այս ասաց և էլ յուզեց բորբոքուածին աստուածուհուն.
 Ուժգին թռիչքով սա ցած թռաւ բարձրապառաժ Ոլիմպոսից.
 Իսկ Հեկտորին նեղում էր միշտ վանողն Ա.քիլլ վազելու մէջ,
 Ինչպէս բարակն է հալածում լեռների մէջ մի եղնորթի,
 60 Քնատեղից արթնացնում, ձոր ու անտառ վազ է տալիս.
 Խեղճը թէև պաշտպանուելով՝ մացառների տակն է պահում,
 Բայց խուզարկուն վազում է միշտ նրա յետից՝ մինչև գտնի.
 Հեկտորն այսպէս չթագնուեց քաջայարձակ Ա.քիլլէսից:
 Որքան յաճախ նա դիմելով դէպի դռներ Դարդանէսեան՝
 65 Բարձրակատար աշտարակաց շուրջն էր վազում արշաւասոյր,
 Որ թերևս նրան պահէր տրրովացոց նետը վերից,
 Վանողն այնքան աճապարում, դէպի դաշտն էր քշում նրան.
 Բայց նա կրկին յետ դառնալով՝ դէպի քաղաքն էր սլանում:

- Ինչպէս որ մարդ երազի մէջ փախչողին զուր հալածում է,
- 70 Ձի կարենում սա փախուստ տալ նրա ձեռքից, ոչ նա բռնել,
Այնպէս նրան վազելու մէջ ոչ սա բռնեց, ոչ նա փախաւ
Հեկտորն ինչպէս պիտ ազատուէր և՛ օրհասից, և՛ մահուանից,
Թէ մօտ չգար վերջին անգամ Ապօլլոնը հրամայող,
Որ նորոգեց նորա կորով ու ծնկները արագաչարժ:
- 75 Իսկ դիւցազարմ Ա.քիլլէսը սաստում գլխով զինուորներին,
Որ դառնաթոյն իրենց նետեր էլ չձգեն դէպի Հեկտոր,
Գուցէ պատիւ խոցողն աննի, և ինքն յանկարծ երկրորդ լինի:
Իսկ երբ նոքա չորրորդ անգամ հասան ցայտող աղբիւրներին,
Նախախնամող Ջեսը վերցրեց ոսկի կշիռ՝ բարձրացրեց,
80 Մահուան երկու երկարաքուն վիճակ գցեց նժարներում,
Որոնցից մին Պելիսեանի, միւսն Հեկտորի՝ ձիահմուտ.
Բարձրացրեց՝ միջից բռնած, և Հեկտորեան նժարն իջաւ
Դէպի գոխք. այդպէս նրան թողեց Գուշակն Ապօլլոնը:
Եւ Աթինաս աստուածունին՝ Պաթակն հասաւ Պելիսեանին
85 Ու նրա մօտ և կաւ, կանգնեց՝ թեաթոխ խօսքերն ասաց.
«Արդ յոյս ունեմ, վեհդ Ա.քիլլէս, աստուածներին դու սիրելի,
Որ մեծ պարծանքը կը վաստակենք միրմիրդոնեան նաւատորմին՝
Սպանելով քաջ Հեկտորին՝ անյագագոյն ազգմիկին:
էլ չի կարող այսուհետև ազատ մնալ նա մեր ձեռքից,
90 Որքան էլ որ կորովածիգ Ապօլլոնը տանջանք կրէ՝
Թաւալելով հօր ոտքերին՝ ասպարափառ Շանթառաքի:
Դու կայ այստեղ և ոգի առ, իսկ ես դնամ Հեկտորի մօտ
Ու նրա միտքն այնպէս շահեմ՝ մնայ քեզ հետ կոխ մղէ»:
Այսպէս ասաց աստուածունին, ու նա լսեց ուրախ սրտով
95 Եւ այնտեղ պղնձատէգ իւր նիզակին կոթնած կանգնեց,
Ու դիցունին նրան թողեց, գնաց դիւցազն Հեկտորի մօտ՝
Իւր հասակով, բարձրահնչիւն ձայնով նման Դէլփորին,
Գնաց, կանգնեց նրան մօտիկ, թեաթոխ խօսքերն ասաց.
«Ո՛հ, մեծ եղբայր, ինչպէս վազկան Ա.քիլլը քեզ նեղում է
արդ
100 Պրիամոսի օստանի շուրջ վարժ ոտքերով հալածելով:
Կանգնենք այստեղ և անյողդողդ դիմադրենք քաջագոյնին»:
Աստուածունն սաղուարտածօձ Հեկտորն այսպէս պատաս-
խանեց.
«Իսկապէս դու, Դէլփորէ, ինձ սիրելի էիր փոքրուց
Իմ եղբարց մէջ, որոնց ծընան, Պրիամոսն ու Հեկաբէն.
105 Եւ հէնց այժմ էլ և՛ս առաւել պէտք է ես քեզ յարգեմ,
պատուեմ.

Քանզի հէնց ես աչքիդ ընկայ՝ դու յանձն ատար իմ պատ-
ճառով

Պարխպն անցնել, իսկ ուրիշներն այնտեղ մնում պարսպից
ներս»:

Երան Զեսի Խաժակ դուտար Աթենասը պատասխանեց.

«Եղբայր, հայրս, արդոյ մայրս թախանձագին խնդրեցին ինձ
110 Եւ միասին փաթաթուեցին իմ ծնկներին, ընկերներս էլ

Պաղատեցին այնտեղ մնամ՝ բոլորն այնքան լիքն են անով:

Բայց քեզ համար իմ կրծքի մէջ հալու մաշ էր սիրտս լինում:

Այժմ ուզիդ դէպի կախ. այսուհետեւ չինայեմք

Մեր նիզակներ. տեսնենք Աքիլին սպանելով՝

115 Արնոտ զէնքեր դէպ գողաւոր նաւերն աւար պիտի տանի,
Թէ գուցէ նա քո գեղարդով դիատապատ կընկնի գետին»:

Այս էր խօսում նենգ դիցուհին, նրան տանում դէպի առաջ՝
Երկու քաջներն երբ գնալով եկան, հասան միմեանց մօտիկ,

Այս խօսքերը Աքիլէսին կորգակախորխտ Հեկտորն ուղղեց.

120 «Էլ չեմ փախչի ես քեզանից, Պելսի որդի, ինչպէս առաջ
Շուրջ ոտանին Պրիամոսի երեք անգամ փախուտս տուի,

Քո յարձակմանց չդիմացայ. բայց արդ հոգիս յորդորեց ինձ
Ելնել անվախ քո դէմ կանգնել՝ քեզ սպանեմ, կամ ես ընկնեմ:

Այլ այժմ եկ, սասոււածներին անենք վկայ. նոքա լինեն

125 Ազնիւ վկայք մեր երգումին և պահապան մեր դաշինքին.

Զինի մարմինդ անարգեմ ես, թէ Շանթառքն ինձ չնորհէ

Այս կոուի մէջ յաղթութիւնը, և չլինի հոգիդ անեմ,

Այլ քեզանից չքնաղ զէնքերդ աւարելով, Աքիլէս,

Տամ մարմինդ արայեցոց, և դո՛ւ պահիր մեր այս դաշինք»:

130 Սրավաղ Աքիլին ակնարկելով ծուռ աչերով՝ սասայ նրան.

«Ինձ հետ, Հեկտոր, անհաշտ ոտխ, պայմաններից մի ճառիր դու.

Զկայ երբէք առիւծների և մարդկանց մէջ անենեց դաշինք,

Եւ չեն կարող սրտանց, անկեղծ ընկերանալ դայլն ու գառ.

Յաւէտ անհաշտ՝ պէտք է նոքա չարիք նիւթեն մէկմէկու դէմ:

135 Այդպէս մեր մէջ և ո՛չ մի սէր, ոչ էլ դաշինք կարէ լինել,

Որ մենք հաշտուենք, մինչև մէկիս դին չի ընկնի թաւալզլոր՝

Արեամբ յագուրդ տայ Աթէսին՝ մորի, անասնձ ազմիկին

Ամեն անսակ ռազմամիջոց նկատի առ. այժմ պիտի

Դու աւելի կորսվատէդ և աննկուն կոուող լինես»

140 Ո՛չ մի փախուտ էլ քեզ չկայ, և Աթենաս Պալլասը քեզ

Շուտ իմ աչքով կընուածէ, և դու մէկէն կ'հատուցանես

Բոլոր տանջանքն ընկերներիս, որ կապաղած սպանեցիր:

Ասաց, ճօճեց կրկայնաստուեր իրեն նիզակն ու շարտեց,

- Որը իսկոյն տեսաւ Հեկտորն ու խուսափեց նա՝ պանծալին,
 145 Գանդի նստաւ ծնկանց վրայ, պղնձի տէգն անցաւ վերից,
 Մեխուեց գետին, որ խլելով Զեսի դուստր աստուածուհին,
 Զիահմուտ Հեկտորից գաղտ՝ Ա.քիլլէսին մատուցեց:
 Իսկ Հեկտորն անաստելի Պելիսեանին այսպէս ասաց:
 «Վրիպեցիր, ով Ա.քիլլէս աստուածանման, բոլորովին
 150 Դու չիմացար թախտա Զեսից, թէև այդպէս ինձ ասացիր.
 Բայց դու խարդախ և խօսքերով շաղակրատ դարձար իմ դէմ,
 Որ իմ կորով ու քաջութիւն ևս մոռանամ քո սարսափից:
 Ես չեմ փախչի, և քո նիզակ թիկունքիս մէջ չես մխի դու.
 Այլ ուղղակի առաջ շարժիր, կուրծքը մխիր յարձակուողիս,
 155 Եթէ Աստուած տուել է քեզ: Սրդ խուսափիր պղնձի տէգէս,
 Որ երանի ամբողջովին ընդունէիր քո մարմնի մէջ,
 Այն ժամանակ քո սատակմամբ թեթեալոյն գուցէ լինէր
 Մեր տրովեանց պատերազմը, նըրանց շատ մեծ չարիք ևս դու:
 Ասաց, ձգեց երկայնաստուեր այն նիզակը ճօճելով
 160 Եւ անվրէպ պորտին զարկեց Պելիսեանի վահանի,
 Բայց վահանից տէգն յետ դարձաւ, ու զայրոյթով լցուեց
 Հեկտոր,
 Որ սրաթև իրեն նիզակն ի դուր թռաւ իւր բազուկից.
 Կանգնեց, նայեց, խռովայոյզ, ուրիշ գեղարդ էլ չունէր նա.
 Կանչում էր նա սպիտակասպար Դէիփորին ուժգին ձայնով
 165 Եւ նրանից նոր սուր նիզակ էր խնդրում, բայց նա չկար:
 Հեկտորն իր մէջ ամենայն ինչ լաւ հասկացաւ և այս խօսեց.
 «Վայ ինձ, ճիշտ որ ամենազօր աստուածներն ինձ մահուան
 կանչին.
 Ես կարծեցի ինձ հետ է նա՝ աստուածազարմ Դէիփորս.
 Բայց պարսպի ներսումն է նա. Աթենասն ինձ մոլորեցրեց:
 171 Եւ այժմ արդէն զարհուրելի մահն է ինձ մօտ, էլ չի դառնայ,
 Պրծում չկայ, անշուշտ այսպէս վրճրուեցին աստուածները
 Շանթառաք Զես և նետողը՝ նրա որդին, որ առաջուց
 Ինձ պահեցին սիրայօժար, իսկ արդ օրհասն հասնում է ինձ:
 Բայց ևս ի դուր հող չեմ մանի՝ բոլորովին անփառունակ,
 175 Այլ մեծ ապանձ բան կը գործեմ՝ յետնորդներին արժանալուր:
 Այս ասաց նա և շարսեց սուրը հատու վազակաւոր,
 Որ ձախ կողքից էր կախ տուել՝ մեծ ու ամուր և հոծանիւթ:
 Կծկուելով թռաւ տեղից, ինչպէս արժիւ երկնաթռիչ,
 Որ սևամաժ ամպոց միջից դաշտ է սուրում՝ ասպատակում
 180 Յափշտակէ մատաղ գառնուկ կամ նապաստակ՝ վախկոտ,
 Ինչպէս Հեկտորն առաջ թռաւ, մահու սուսեր շողացնելով:

- Սլացաւ նաև քաջն Ա.քիլլէս՝ սիրան ամենի լի բարկութեամբ,
 Եւ իւր լանջի առաջ պարզեց շքեղաշուք իւր վահանը՝
 Չքնաղագեղ արուեստակերտ, չորեքխորան սաղաւարտը
 185 Փայլակնացայտ տատանուում էր, սիրունափայլ ծփում էին
 Ոսկեծամեր, որ Հեփեստոսն այնտեղ շինեց՝ խորաններում,
 Ինչպէս մթին գիշերուայ մէջ աստղերի շարքն աստղ է փայլում
 Գիշերավարն՝ երկնքի մէջ շքնաղագեղ ու վառ աստղիկ,
 Շողքեր էին ցայտում այնպէս սուր նիզակից, ոց Ա.քիլլէսն
 190 Աստուածազարմ Հեկտորի դէմ ոճիր նիւթած ձեռն էր բռնել
 Սիրուն իրանն արած նշան՝ զէնքի համար հեշտաթափանց,
 Բայց նրա մարմինն ամբողջովին զրահ էր պատել պղնձածոյլ
 Եւ գեղեցիկ, որ Պատրոկլից էր կողոպտել՝ սպանելով այն
 կտրեճին.
- Միայն անտեղ, ուր անրակներն յօգում ուսից պարանոցին,
 195 Կոկորդն էր բաց, որի մէջն է հողու կորուստն անդառնալի.
 Նետեց այնտեղ, ու նիզակով Ա.քիլլէսը խոցեց նրան,
 Եւ մահառիթ թոյնը մտաւ ճիշտ սպիտակ նրա վզի մէջ.
 Բայց պղնձէ նիզակն այնքան չկտրատեց չնչափողը,
 Որ նա խօսել, պատասխան տալ ամենին չկարենայ:
 200 Գետին ընկաւ նա փոշու մէջ, պանծաց Ա.քիլլն աստուածա-
 զարմ.
- «Սպանեցիր Պատրոկլէսին ու կարծեցիր սղջ կը մնաս.
 Ինձանից էլ չվախեցար. երբ հեռացայ պատերազմից.
 Յիմնր ոտիս, նրա համար մեծ վրիժառու՝ քեզանից քաջ
 Այն գողաւոր նաւերի մէջ նրանից յետ ես մնացի,
 200 Որ ջարդեցի քո ծնկները: Եւ այժմ քեզ չուն ու թռչուն
 Բըզիկ—բըզիկ կը պատռտեն, նրան թաղեն արայեցիք:
 Վերջին շնչին հասած Հեկտոր, սաղուարտածօճն այսպէս ասաց.
 «Պաղատում եմ՝ ոտներդ ընկած՝ ծնողներիդ, կեանքիդ սիրուն
 Ինձ մի ձգիր միրմիրոնեան շների դէմ՝ պատառելու,
 210 Առատ պղինձ, թանկ ոսկիներ որքան կուղեռ, պահանջիր դու,
 Քեզ կուղարկեն իբրև փրկանք իմ հայրիկը, արգոյ մայրս,
 Միայն թէ իմ մարմինը դու դարձրցու նրանց, որ տրովացիք
 Եւ տրովուհիք վերջին յարգանք մատուցանեն՝ հրով այրեն»
 Խէթ նայելով այսպէս ասաց արագավազ Ա.քիլլը նրան.
- 215 «Զուր ես գրկում օտքերս, չուն, ծնողներիս անուամբ խնդրում.
 Թէ զայրոյթիս ականջ դնեմ, պատան—պատան կանեմ ես քեզ
 Եւ կը լափեմ մարմինդ հում՝ ի տրբիտուր արարքներիդ:
 Մարդ արարած քո վերայից լափող շներին չի հալածի.
 Այլև նոյն իսկ տասնապատիկ, քսանպատիկ նոյնքան պարզև
 220 Եթէ բերեն, այստեղ կչսեն և խոստանան ուրիշ շատեր,

Եթէ նոյնիսկ հրամայէ ազնիւ ոսկու հետ քեզ կշտել
 Դարդանհանն, Պրիամոս, նոյն իսկ յայնժամ մայր Հեկտորան
 Քեզ քո մահուան մահճի վրայ էլ չի ողբայ, ծնունդն անիծի:
 Այլ քեզ իսպառ կը բըզկրտեն պատառ—պատառ շուն ու
 թռչուն»:

225 Ծունչը տալով՝ կորդակածօճ Հեկտորը նրան կրկին ասաց.
 «Գիտէի քեզ, նախազգացի, որ երբէք իմ աղերսանքով
 Ձեռ քաղցրանայ, զի կրճքիդ տակ սիրտդ անշուշտ է երկաթի.
 Բայց սպասիր, աստուածներին գուցէ դարձնեմ վրէժխնդիր
 Այն օրը, երբ Պարիսը քեզ և գուշակն Ապօլլոն»

230 Կոչնչացնեն քաջայազմիդ Աքէյական դռների մօտ:
 Մինչ այս խօսքերն ասում էր նա՝ մահը եկաւ, նրան պատեց,
 Իսկ նրա հոգին անդամների միջից թռաւ խորքը դժոխքի,
 Ողբալով իւր բախտը դաժան, թողնելով ոյժ և քաջութիւն:
 Նրան Պելեան Աքիլէսը և անչնչին այսպէս ասաց.

235 «Մեռիր դու, իսկ իմ մահուան, երբ Ծանթառաքն ուղարկէ ինձ
 Եւ միւս անմահ ատուածները, այն ժամանակ առաջ կերթամ»:
 Այսպէս ասաց և զիակից քաջաց պղնձի տէգը հանեց,
 Ու նա մի կողմ շարտեց այդ, արնոտ զէնքերն ուսից վերցրեց:
 Դէպի այդտեղ գալիս էին աքայեցոց այլ զաւակուհք,

240 Աքանչացած նայում էին զեղեցկութեան և հասակին
 Այն Հեկտորի, որին ոչ ոք մօտ չէր կանգնում՝ շխոցելով:
 Եւ մէկ մէկու ակնարկելով՝ նոքա միմեանց ասում էին.
 «Ա՛յ քեզ դարմանք, այժմ Հեկտորն ինչ կակուղ է շօ-
 շափելիս,

Քան երբոր նա նաւերի մէջ կրակ գցեց բոցավառուած:
 245 Այս էր ասում ամեն մէկը և մօտ գալիս՝ նրան խոցէ:
 Իսկ քաջոտն Աքիլէսը նրա վրից զէնքերն առաւ
 Ու կանգնելով աքայեանց մէջ՝ թեկաթոխ խօսքերն ասաց.
 «Ո՛վ սիրելիք՝ քաջք աքայեանք, դուք Արէսի սէգ ծառաներ,
 Քանզի աստուածք ի վերջոյ ինձ նորհեցին սրան յաղթել:

250 Որ շատ չարիք գործեց մեր զէմ, քան թէ բոլոր ուրիշները,
 Դէ՛հ եկէք շուտ գէպի քաղաքն անցնենք զինուած, հանդի-
 սաւոր,
 Որպէսզի մենք տեղեկանանք՝ ինչ միտք ունեն տրովադացիք,
 Թէ քաղաքի դղեակն արգեօք պէտք է զիջեն նրա մահով,
 Թէ Հեկտորի մահից յետ էլ դեռ դիմանալ կը յանդգնեն:

255 Ինչո՞ւ արգեօք իմ սիրտը ինձ այսպիսի միտք թելագրեց.
 Անսուգ, անթաղ մնում է այնտեղ նաւերի մօտ մեռած ընկեր-
 Պատրոկլէսը, որին երբէք չեմ մոռանայ, քանի չըջեմ

- Ողջերի մէջ և քանի զեռ ծնկներին մէջ ոյժ կը լինի
 Թէ իսկ մեռեալք զժողովի մէջ կտրցնեն իրենց յիշողութիւն,
 260 Այնտեղ էլ ևս պէտք է յիշեմ մտերմագոյն իմ ընկերինս
 Դէհ, զինուորներ աքայեցոց, նուազենք պէսնն յազմական
 Ու յետ դառնանք՝ սրան տանելով դէպ խորափոր նաւա-
 տորմիզ
 Մեծ է պատիւ մեր յազմութեան. սատակեցաւ գիւցազն
 Հեկտոր,
 Որին արովեանք ոստանի մէջ պաշտում էին Աստուծու պէս
 265 Այսպէս ասաց, Հեկտորի վրայ շատ անպատիւ քան կա-
 տարեց.
 Նրա երկու ոտքը ձեզքեց ջղերի տակից՝ կրունկներից
 Մինչև կոճեր, և նրանց մէջ կաշէ խրայք անցկացրեց,
 Կապեց նրան անուակառքից, իսկ գլուխը թողեց քարշուի,
 Եկաւ, կանգնեց կառքին մօտիկ և պերճափայլ գէնքերն առաւ
 270 Ու մտրակեց նժոյգներին, և սլացան արագավազ.
 Եւ քարշուողի թանձր փոշին ամպ էր կազմում, ու ու գէսերն
 Այտակալ-աչնտեղ թափուում էին, և փոշու մէջ գլուխը քաշուում,
 Որ գեղեցիկ էր երբեմն, բայց Զեան այսօր մատնեց նրան
 Ոտիներին՝ անարգելու իւր հայրենի աշխարհի մէջ:
 275 Այսպէս նրա գլուխն ամբողջ փոշու մէջ էր. Այդ ժամանակ
 Մայրը իրեն վարժը փետեց և դէն ձգեց զարգարուն քօղն
 Ու նայելով իւր որդեակին՝ գութեց ուժգին, մեծակական.
 Ողորմագին լաց էր լինում սրբելի հայրն, ու ժողովուրդն
 Ամբողջ ողբում, հառաչանքի ձայն էր հնչում ողջ քաղաքում:
 280 Նման էր շատ այդ տեսարան, կարծես Ոլիոնն բարձրայօն
 պէտք է հիւրից հարթայատակ հրդեհակէզ ոչնչանար:
 Ամբոխն հագիւ էր կարենում այդ տխրակից ծերին բռնել,
 Որ դարդանեան դարպասներից դուրս ելնելու ճիգ էր թափում:
 Աղաչում էր՝ թաւալելով քակորների, աղբերի մէջ,
 285 Ամեն մէկի անունն ասում՝ այս խօսքերով աղաչելով.
 «Հեռո՛ւ ինձնից, թողէք մեծակ, որքան էլ որ դուք վշտանաք,
 Այս քաղաքից թողէք ելնեմ՝ գնամ նաւերն աքայեցոց.
 Կը պաղատեմ ևս այն մարդուն՝ կղեւնաւոր և ոճրագործ,
 Գուցէ քաշուի իմ հասակից և ողորմի ալիքներինս,
 290 Քանզի նրա հայր Պելեան էլ անտարակոյս է այսպիսի,
 Որ նրան ծնաւ և սնուցեց՝ պատիժ դառնայ տրովադացոց,
 Եւ մանաւանդ աւելի ինձ, քան բողորին՝ ցաւ ու մորմոր:
 Քանզի քանի մատաղահաս զաւակներին զրկեց կեանքից,
 Եւ բոլորին այն ատիճան ևս չեմ ողբում կակծելով,

- 295 Ինչպէս մէկին, որի ժանտ սուգն ինձ պիտ դժօրք իջեցնի,
 Իմ Հեկտորին Երանի նա գօնէ մեռնէր իմ գրկի մէջ,
 Քանզի յայնժամ կըյազկենայինք մեր ողբերով, արտասուքով,
 Եւ ես, և՛ նա, որ ծնաւ նրան՝ թշուառական մայրը նրա
 Այս էր ասում լալահառաչ, հեծում էին քաղաքացիք:
- 300 Իսկ կանանց մէջ նախ Հեկաբէն սկիզբ դրեց հեկեկանքին.
 «Որդեակ, ինչո՞ւ էլ ապրեմ ես այսուհետև տառապալից,
 Երբ դու մեռար, իմ սիրելիս, որ ինձ համար գիշեր-ցերեկ
 Պարծանք էիր Իլիոնի մէջ և քաղաքում ողջին թիկունք՝
 Տրովադացոց և տրովուհեաց՝ աստրծու տեղ պաշտոզներիդ,
 Քանզի նոցա ճշմարիտ որ պարծանք էիր դու քո կեանքում.
- 305 Իսկ այժմ արդէն անաւատիկ օրհասն ու մահ տիրել են քեզս:
 Այսպէս ասաց նա ողբալով: Հեկտորի կինն ամենին
 Բան չէր լսել, մի լքարեր չեկաւ նրա մօտ ճիշտ լուր
 տալու,
 Թէ ամուսինն այնտեղ՝ դաշտում դռներից դուրս է մնացել,
 Այլ պալատի վերնատան մէջ իւր պատմուճանն էր նա գործում
 Երկու տեսակ, աչքը խողով և գունագեղ նկարազարդ:
 Ապարանքում պատուիրել էր իւր վարսագեղ նաժիշտներին
 Շուտով մի մեծ եռօտանի դնեն վառուն կրակի վրայ
 Զուր տաքանայ՝ կուռից յետոյ քաջ Հեկտորին՝ լողանալու:
- 315 Ո՛վ միամիտ, չէր իմանում, թէ շատ հեռու լողարանից
 Աքիլլէսի ձեռքով նրան ընկճեց արդէն դուտորը Զևսի.
 Յանկարծ լսեց աշտարակից գոռում-գոչիւն և ողբաձայն.
 Անդամները ողջ գողացին, կըկոցն ընկաւ նրա ձեռքից,
 Եւ անհանգիստ նա ձայն տուեց գեղազանգուր նաժիշտներին.
- 320 «Դէ՛հ, երկուսով եկէք ինձ հետ, դնամ տեսնեմ ինչ պատահեց.
 Իմ պատուական սկեսուրի ձայնն եմ լսում. և կրճքիս մէջ
 Սիրտս գալիս է բերանս, ու ծնկներս թուլանում են:
 Պրիամոսի որդոց անշուշտ արդ մեծ փորձանք է սպասում
 Հեռու ինձնից այդպիսի լուր. բայց սոսկալի միտք եմ անում
- 325 Չ՛նի խիզախ Հեկտորին արդ դիւցազն Աքիլլ հեռացներով
 Պարիսպներից մեն—միայնակ՝ հալածում է դաշտի վերայ.
 Գուցէ արդէն նուաճել է այն անողորմ քաջութիւնով,
 Որ միշտ նրան կեանք է տալիս նա չէ մնում բազմութեան
 մէջ,
 Այլ համարձակ առաջ սուրում և ոչ ոքից յետ չի մնում»:
- 330 Այսպէս ասաց ու դուրս թռաւ տանից՝ նման Մենագային.
 Դողում էր սիրտն ու յետեից դընում էին զոյգ նաժիշտներս
 Իսկ երբ հասաւ աշտարակին և միմեանց մօտ խմբուած
 մարդկանց,

- Նա կանգ առաւ պարսպի մօտ, աչքը պտտեց, տեսաւ նրան.
 Քաղաքի դէմ քարշուում էր նա, և նժոյզներն արագընթաց
 335 նրան անխիղճ ձգում էին դէպ աքայեան սրաթև նաւերս
 Խաւարամած մութը խակոյն պատեց նրա պսոյծառ աչեր,
 Գլորուեցաւ դէպի յետև, շունչը կարծես արդէն փչեց.
 Պերճապակ շքեղ զարդեր ընկան հետու նրա գլխից՝
 Ապարօշն ու ծամակալ և հիւսածոյ սիրուն երիզն
 340 Ու քօզն, որ օսկեղինիկ Աֆրոդիտէն էր շնորհել
 Այն օրը, երբ սաղուարտածօճ Հեկտորը նրան էտիովնի
 Տանից բերեց, մեծ գլխագին տալով նրա ծնողներինս:
 Նրա չորս կողմ խրոնուել էին նրա տալեր, տազեր կանայք,
 Բռնում էին շնչասպառին, սրը մարում էր մահամերձ:
 345 Երբ նա կրկին սկսեց շնչել, խելքն հաւաքեց ուշքի եկաւ,
 Արտասոււախեղզ կոծ անելով կանչեց տրովեանց կանանց միջից.
 «Հեկտոր, վնջ ինձ տարաբախտիս. ուրեմն մի բախտով
 ծնուանք
 Թէ դու, թէ ես, դու Տրովայում, Պրիամոսի ապարանքում,
 Ես Թերէում, անտառախիտ Պլակայ սարի ստորոտում,
 350 Գէտիոնի յարկի տակին, որ անուցեց ինձ փոքրկուց՝
 Այն եղկելին՝ ողորմելուս. երնէկ բնաւ ինձ չէր սընած:
 Իսկ արդ ուղիղ Աիդի մօտ՝ մթին խորշեր երկրի խորքում
 Գնում ես դու, և ինձ այրի, ծանրաթախիծ սգով թուլցած
 Թողնում ես քո ապարանքում, և մանուկիս մատաղահաս,
 355 Որին ծնանք մենք երկուսով՝ թշուառներս. նրա համար
 Բերկրանք, Հեկտոր, էլ չես լինի, քանզի մեռար. ոչ էլ նա քեզ.
 Քանզի թէկուզ նա ազատուի աքեանց կռուից աղէտաբեր՝
 Ճաւ, տառապանք ապագայում միշտ նրա հետ պիտի լինեն.
 Քանզի օտարք պէտք է խլեն արտերն անբախտ որբի ձեռքից:
 360 Կորցնում է նա իւր մանկութեան ընկերներին որբ ժամանակ,
 Նա շարունակ գլուխը քաշ, նրա աչերն արտասուալից,
 Խիստ չքաւոր՝ դիմում է նա իւր հայրիկի ընկերներին,
 Քաշում մէկի վերարկուից, միւսի զգեստից կախ է ընկնում:
 Մէկը նրան ողորմում է, քիչ խրմելու ջուր է մեկնում,
 365 Որ շրթներն է հազիւ թրջում, քիմքը բնաւ թաց չի անում:
 Յաճախ նրան խրախճանից երջանիկ ոմն հանում է դուրս,
 Բոռնցքներով գանակոծում և հալածում հայհոյելով.
 «Կորիր գնա, քո հայրը մեր կերուխումից հետու է շատ»:
 Եւ լալագին յետ է դառնում, այրի մօր մօտ գնում մանուկն—
 370 —Աստիանաքս, որ երբեմն ծնկանց վրայ իւր հօր գրկում
 Ուղեղով էր կերակրում և պարարակ գառան մտով:

Իսկ երբ յոգնած իւր խաղերից՝ նինջ առնելու էր զընում նա,
 Մահճում անուշ քուն էր մտնում՝ իւր դայեակի ծոցը մտած՝
 Կակուղ, փքուած անկողնու մէջ՝ փափկութիւնից սիրտն
 զմայլած:

375 Իսկ այժմ շատ պիտի տանջուի՝ զրկուած իրեն քաղցր հօրից—
 —Աստիանաքան—ինչպէս սրան տրովադացիք են անուանում.
 Զի միայն զու էիր պահում նոցա բարձր դուռն ու պարիսպ
 Իսկ արդ հեռու ծնողներից, մահիկաձև նաւերի մօտ
 Զեռուն սրդունք կուտեն մերկիդ, երբ շունք քեզնով կը յա-
 գենան,

380 Մինչ պալատում հրքան զգեստ կայ մթերուած քեզի համար՝
 Նուրբ, վայելուչ գործած, հիւսած տրովեանց կանանց ճար-
 պիկ ձեռքով:

Բայց այդ ամենն ես բոցավառ կրակի մէջ պէտք է նետեմ,
 Քանզի բոլորն էլ քեզ պէտք չեն և էլ երբէք դու չես հագնի.
 Տրովադացոց աչքի առաջ ի փառս քո պիտի այրեմ:

385 Այսպէս ասաց նա ողբալով. շուրջը կանայք կոծում էին:

Յարուբին Պետրոսեան.

1908 թ. յունուար

Էջմիածին.

